Վավերացնում եմ՝ Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ռ. Քոչարյան

17 օգոստոսի 2005 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 օգոստոսի 2005 թվականի N 1194-Ն

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության ենթակայության «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպություն:

2. Հաստատել «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնել 5086,1 հազ. դրամ արժողությամբ գույք՝ բացառությամբ շենքերի, շինությունների, պատմամշակութային նշանակության եւ նվազագույն աշխատավարձի 10000-ապատիկը գերազանցող գույքի:

«Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանն անժամկետ եւ անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել Երեւանի Կոմիտասի 51 հասցեում գտնվող մասնաշենքի 3-րդ հարկի՝ 478,3 հազ. դրամ արժողությամբ եւ 274.1 քառ. մետր մակերես ունեցող տարածքը՝ դրա նպատակային նշանակությանը համապատասխան օգտագործելու պայմանով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության հետ կնքելով համապատասխան պայմանագիր:

4. Սահմանել, որ՝

ա) «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության գործունեության հիմնական նպատակը եւ առարկան Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման կամ ժամանակավոր արտահանման համար իրավաբանական կամ ֆիզիկական անձանց կողմից հայտարարագրված մշակութային արժեքների մշակութաբանական ու արվեստաբանական փորձաքննության իրականացումը, մշակութային արժեքների մշակութաբանական եւ արվեստաբանական փորձաքննությանը վերաբերող գրքերի, ձեռնարկների, տեղեկագրերի ժողովածուների ու այլ գրականության հրատարակումը, Հայաստանի Հանրապետության մաքսային եւ այլ իրավապահ մարմինների կողմից առգրավված կամ բռնագրավված մշակութային արժեքների մասին տեղեկատվության տրամադրումը, մշակութային արժեքների փորձագիտության բնագավառում գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, մշակութաբանության եւ արվեստաբանության բնագավառում մասնագիտական դասընթացների կազմակերպումն են.

բ) «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության գործունեությունը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով եւ ձևերով.

գ) պետության կարիքների համար մշակութաբանական եւ արվեստաբանական փորձաքննություն իրականացնելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ պատվիրատուին (պետական մարմնին) վերապահված լիազորություններն իրականացնում է

Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարը՝ իր կողմից սահմանված կարգին համապատասխան։

5. «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետեւյալ տեսակները՝

ա) հասարակական եւ հումանիտար գիտությունների, ինչպես նաեւ տեխնոլոգիաների բնագավառներում հետազոտությունների եւ մշակումների կատարում.

բ) լրացուցիչ մասնագիտական կրթական ծրագրով դասընթացների կազմակերպում,

Գ) տեղեկատվության մեքենայական կրիչների վերարտադրում

դ) տվյալների մշակում.

ե) տվյալների հիմնապահեստների հետ կապված գործունեություն,

զ) գրքերի հրատարակում,

է) լուսանկարչության բնագավառի գործունեություն,

ը) գործավարական եւ թարգմանչական ծառայություններ:

6. «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության կառավարման, ինչպես նաեւ «Պետական ոչ առեւտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին կետով, 13-րդ հոդվածի 2-րդ կետի «զ» ու «է» ենթակետերով եւ 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությանը:

7. Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարին՝ մեկամսյա ժամկետում՝

ա) ապահովել «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպության պետական գրանցումը.

բ) հաստատել «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առեւտրային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող եւ ամրացվող գույքի կազմը:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ՝

Ա. Մարգարյան

2005 թ. օգոստոսի 12 Երեւան